ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 423
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի համայնքը (Հրազդան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Կոտայքի համայնքի (Հրազդան քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքը (Հրազդան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի (Հրազդան քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-001-0100-0083 կադաստրային ծածկագրով 8.28055 հա մակերեսով արտադրություն (մետալուրգիական գործարան) կազմակերպելու համար էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության էներգետիկայի հողեր	07-001-0100-0083 կադաստրային ծածկագրով 8.28055 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ արդյունաբերական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նշված պահանջը (կցվում է),
- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին (կցվում է):

4. Հրազդան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Հրազդան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի (Հրազդան քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող	
	Լ.Սարգսյան

Երևան, «18» «նոյեմբերի» 2024 թ.